


26
ՄԱՅԻՍԻ
2023



ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏԻ 2022Թ. ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՂՈՐԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2022Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռիսկերի վրա հիմնված հաշվեքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն



Հաշվեքննիչ պալատը (այսուհետ՝ ՀՊ) Ազգային ժողով է ներկայացրել 2022 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը: Համաձայն հաղորդման՝ 2022 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում ՀՊ-ն իրականացրել է **54** հաշվեքննություն, որից **40-ը՝** 2022 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություններ, **11-ը՝** ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաստատված հաշվեքննություններ, իսկ **3-ը՝** միջազգային պայմանագրերով նախատեսված համատեղ միջոցառումների շրջանակներում:

Այս տեղեկանքում ներկայացված է հակիրճ տեղեկատվություն **ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ իրականացված հաշվեքննությունների** վերաբերյալ:

Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ 2022 թվականին նախատեսված **18** հաշվեքննությունից 11-ը ավարտվել է, 3-ը կասեցվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, իսկ մնացած 3-ը տեղափոխվել են 2023 թվական (դրանք են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության «Զբաղվածության ծրագրի իրականացման գործընթաց», ՀՀ առողջապահության նախարարության «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» և ՀՀ առողջապահության նախարարության «Մոր և մանկան առողջության պահպանում» հաշվեքննությունները):

Իրականացված 11 հաշվեքննություններից 10-ի ընթացիկ եզրակացությունները հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական և ՀՀ հրապարակային ծանուցումների ինտերնետային կայքերում: **Մեկ հաշվեքննության (ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության**

նախարարությունում սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման, ինչպես նաև դրանց առանձին հանգույցների և սարքավորումների՝ ձեռքբերման, արդիականացման, վերականգնման, նոր նմուշների մշակման և արտադրությանն ուղղված գործունեության նկատմամբ հաշվեքննություն) արդյունքները պետական գաղտնիք պարունակելու հիմքով չեն հրապարակվել:

Հաշվեքննությունների ընթացքում կիրառվել են հաշվեքննության 3 տեսակները՝ տարբեր համակցություններով.

- **Ֆինանսական,**
- **համապատասխանության,**
- **կադրորոլականի:**

Մասնավորապես, հրապարակված 10 հաշվեքննություններից 3-ի դեպքում կիրառվել է հաշվեքննության «համապատասխանության», իսկ 5-ի դեպքում՝ «կադրորոլականի» տեսակները: Եվս 2-ի դեպքում «Ֆինանսական» և «համապատասխանության» հաշվեքննությունները համակցվել են:

Հաշվեքննությունների շրջանակներում 4 հաշվեքննությունների մասով տրամադրվել է «դրական եզրահանգում», իսկ 1-ի մասով՝ «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք (տե՛ս Աղյուսակը): Հաշվետու ժամանակահատվածում իրականացված հաշվեքննությունների արդյունքներով «բացասական եզրահանգում» և «հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» կարծիքներ չեն տրամադրվել:

Աղյուսակ. Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների շրջանակներում տրամադրված կարծիքները

Կարծիք	Հաշվեքննություն
Դրական եզրահանգում	- Պետական եկամուտների կոմիտեում նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն - Պետական եկամուտների կոմիտեում պետական բյուջեի մուտքերի ձևավորման կանոնակարգված գործունեության համապատասխանության հաշվեքննություն - Ծաղկածորի համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ՀՀ պետական բյուջե որպես նվիրաբերություն փոխանցված միջոցների օգտագործման նկատմամբ իրականացված համապատասխանության հաշվեքննություն
Ոչ լիարժեք եզրահանգում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրերի նկատմամբ համապատասխանության հաշվեքննություն

Կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում արձանագրվել են՝

- ✓ **տնտեսման** սկզբունքի չպահպանման՝ 1 դեպք,
- ✓ **օգտավետության** (նպատակային արդյունավետություն) սկզբունքի չպահպանման՝ 2 դեպք,
- ✓ **արդյունավետության** (ծախսային արդյունավետություն) սկզբունքի չպահպանման՝ 2 դեպք:

Հաշվեքննությունների ընթացքում բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման ու կանխարգելման, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացման համար ՀՊ կողմից պատկան մարմիններին ներկայացվել է **66 առաջարկություն**, որից՝

- **25-ը՝** համակարգին միաված,
- **23-ը՝** արդյունքին միաված,
- **18-ը՝** խնդիրների բացահայտմանը (լուծմանը) միաված:

Հաշվեքննությունների ընթացքում բացահայտված ռիսկերից առավել բնորոշները հետևյալներն են.

• Որոշ գնումներ փաստաթղթերով հիմնավորված չեն եղել և (կամ) չեն համապատասխանել գնումների գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված պահանջներին:

• Որոշ դեպքերում հաշվեքննության օբյեկտ հանդիսացող կազմակերպությունները պայմանագրեր են կնքել գնումների կազմակերպման մրցույթով հայտարարված պահանջներին չբավարարող անձանց կամ կազմակերպությունների հետ:

• Որոշ դեպքերում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերը էապես շեղվել են դրանց պլանային մեծություններից, մրցակցության բացակայության պայմաններում ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների ծախսերը չեն հիմնավորվել որպես նվազագույն:

• Որոշ գնումների դեպքում ընթացիկ փոփոխությունների արդյունքում վերջնական պայմանագրային գներն էապես գերազանցել են նախահաշվային արժեքին:

• Որոշ կազմակերպություններ իրենց տրամադրված պետական ֆինանսական աջակցության միջոցները նպատակային չեն օգտագործել:

2022թ. հաշվեքննությունների արդյունքներով 5 դեպքի վերաբերյալ նյութերը ՀՊ-ի որոշմամբ ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն (տե՛ս կից Հավելվածը): Եվս 6 հաշվեքննությունների փաթեթները ՀՊ-ն տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազությանն՝ իր իսկ պահանջով:

2022թ. ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված նյութերի և Հաշվեքննիչ պալատի հրապարակած հաշվեքննությունների արդյունքների շրջանակներում 6 առանձին ուղղություններով նախաձեռնվել է քրեական վարույթ, և կատարվում է նախաքննություն, իսկ առանձին ուղղություններով ուսումնասիրությունները շարունակվում են:

Նախորդ տարիների հաշվեքննություններով հաշվետու տարում ընթացքում գտնվող քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 834.9 մլն դրամ, կատարվում է նախաքննություն:

2022 թվականին իրականացված ռիսկերի վրա հիմնված հաշվեքննությունների առավել ուշագրավ արդյունքները ներկայացված են ստորև:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտները՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2020թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը:

Հաշվեքննության առարկան «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ՀՀ պետական բյուջե որպես նվիրաբերություն փոխանցված միջոցների օգտագործումն է:

Ուշադրության են արժանի համապատասխանության հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

• Հաշվեքննության մեջ որպես ընդհանուր թերություն նշվում է, որ չնայած Նվիրաբերության պայմանագրերով սահմանվող այն պահանջին, որ Նվիրաբերությունը ստացողը տրամադրված ֆինանսական միջոցներով կատարված ծախսերի վերաբերյալ պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսի 15-ը Նվիրաբերողին ներկայացնել հաշվետվություն նվիրաբերվող միջոցների ծախսման վերաբերյալ, այնուամենայնիվ, ամենամսյա հաշվետվություններ չեն ներկայացվել: Ուստի, **առկա է անհամապատասխանություն նվիրաբերության բոլոր ինը պայմանագրերով սահմանված համապատասխան պահանջի մասով:**

• «Աջակցություն Արցախի բնակչությանը» միջոցառման շրջանակներում.

2020թ. հատկացված միջոցների մասով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՍՀՆ) և Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև կնքված նվիրաբերության պայմանագրի համաձայն՝ Արցախի կողմից աշխատանքները կատարված են համարվում կատարված աշխատանքների վերաբերյալ ՀՀ ԱՍՀՆ կողմից դրական եզրակացություն տալուց հետո: Նախարարության կողմից մինչև հաշվեքննության ավարտը նման եզրակացություն չի տրվել: Ուստի, **առկա է անհամապատասխանություն պայմանագրով սահմանված դրույթների մասով:**

2021թ. հատկացված միջոցների մասով՝ ՀՀ ԱՍՀՆ-ի և Արցախի Հանրապետության կառավարության միջև կնքված նվիրաբերության պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԱՍՀՆ-ն պարտավոր էր կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ, ինչը սակայն չի իրականացվել: Ուստի, **առկա է հսկողական գործընթացի թերացում և անհամապատասխանություն կնքված պայմանագրով սահմանված դրույթների մասով:**

• «Միանվագ դրամական աջակցություն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին» միջոցառման շահառուների ցանկում հայտնվել են 49 անձանց անուններ (23-ը՝ 2020թ. ցուցակում, 26-ը՝ 2021թ.-ի), որոնք ցուցակում ներառվել են շահառուի մահից հետո: Արդյունքում, միջոցառման վճարման ցուցակներում վերը նշված 49 անձանց մեջ առկա են ընդհանուր 29 շահառու, որոնք ցուցակներում ընդգրկվել են մահվան օրվանից հետո, և կատարվել են վճարումներ:

• Առողջապահական միջոցառումների իրականացման շրջանակներում նշվել է երկու անհամապատասխանություն՝

1. «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին երկու անգամ հատկացվել են գումարներ (105.0 մլն դրամ և 65.0 մլն դրամ)՝ առանց ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ պայմանագիր կնքելու:

2. «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների բաշխումը պատշաճ կարգով իրականացնելու նպատակով Ford Transit Van 470 ջերմային ռեժիմ պահպանող բեռնատար (21.0 մլն դրամ

արժողության) և RENAULT DOKKER բեռնատար (8.0 մլն դրամ արժողության) մեքենաներ ձեռք բերելու համար հատկացվել էր 29.0 մլն դրամ: **ՊՈԱԿ-ը հրատապ է համարել ավտոմեքենաների ձեռքբերման պահանջը, սակայն Ford Transit Van 470 բեռնատար մեքենայի համար անհրաժեշտ ջերմային կահավորումն իրականացրել է ձեռքբերումից 6 ամիս անց միայն:**

Հաշվեքննության արդյունքում տրամադրվել է **«դրական եզրահանգում»** կարծիք:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրերն են:

Հաշվեքննությամբ արվել են արդյունքին միտված 3 և խնդիրներին միտված 5 առաջարկություններ:

Ուշադրության են արժանի համապատասխանության հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Հաշվեքննության ընթացիկ եզրակացության մեջ նշված անհամապատասխանությունների **բոլոր դեպքերը վերաբերում են** Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրին:

- Երկու լոտերի դեպքում, 12.6 մլրդ դրամ ընդհանուր նախահաշվային արժեքով աշխատանքների կատարման համար, ի սկզբանե կնքվել էին 11.0 մլրդ դրամի պայմանագրեր (նախահաշվային արժեքից 1.6 մլրդ դրամով էժան), սակայն շինարարության ընթացքում կատարված փոփոխությունների արդյունքում **վերջնական պայմանագրային գները և հաշվարկված կատարողականների գումարը 1.5 մլրդ դրամով գերազանցել են նույնիսկ նախահաշվային արժեքին:**

- Չնայած ըստ սահմանված պահանջի ճանապարհային պատվածքի ծակոտկեն (խոշորահատիկ) ասֆալտբետոնե շերտի բարձրությունը պետք է

նշանակվի հաշվարկով, սակայն՝ **ոչ պակաս 6 սմ-ից**, այնուամենայնիվ, նախագծերով և պայմանագրերով նախատեսվել ու ամսական կատարողականներով հաշվարկվել և վճարվել է 1.4 մլրդ դրամ՝ 242,790 ք.մ. **5սմ** հաստությամբ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի կառուցման աշխատանքների համար:

- Նյութերի հատկությունների բարելավման նպատակով, առանց հաշվարկի, պարզապես հիմք ընդունելով տեխնիկական վերահսկողության խմբի ղեկավարի փորձը, սկզբնական նախագծով և պայմանագրով նախատեսված 8 սմ հաստությամբ սև խճի փոխարեն իրականացվել է 242,938 ք.մ. 8 սմ հաստությամբ բիտումով կայունացված խճավազային խառնուրդի շերտի՝ ընդհանուր գումարով 1.1 մլրդ դրամի կառուցման աշխատանքներ: Այնինչ, համաձայն գործող կարգի՝ ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտերի բարձրությունը պետք է նշանակվի հաշվարկով: Բացի այդ, համաձայն Խորհրդատուի տված մասնագիտական եզրակացության, նշված փոփոխությունը պատվածքի ամրության վրա չի ազդել, այսինքն՝ հատկությունների որևէ բարելավում տեղի չի ունեցել, սակայն փոփոխության արդյունքում **պայմանագրային գինը ավելացվել է 101.9 մլն դրամով**: Այն դեպքում, երբ լրացուցիչ կատարված աշխատանքները նախահաշվային արժեքներով **ոչ թե թանկ, այլ նույնիսկ շուրջ 277.8 մլն դրամով ավելի էժան են փոխարինված (չկատարված) աշխատանքներից**:

- 6.2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով շուրջ 1.2 մլն քմ ասֆալտբետոնյա ծածկույթի վերին շերտի **աշխատանքներն ընդունվել և վճարվել են առանց ավտոմոբիլի անիվի՝ ծածկից կառչումը կամ ծածկի անողորկությունը (խորդուբորդությունը) ստուգելու սահմանված պահանջի կատարման**:

- Փոփոխությունների արդյունքում կատարողականներով հաշվարկվել և Ծրագրի միջոցներից 1.2 մլրդ դրամ է վճարվել ճանապարհի օտարման և (կամ) պաշտպանական գոտում գտնվող հաղորդակցուղիների տեղափոխման և վերաշինման աշխատանքների համար, այնինչ՝ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքով սահմանված է, որ ճանապարհի վերակառուցման կամ նորոգման դեպքում հաղորդակցուղիները պետք է տեղափոխվեն կամ վերաշինվեն դրանց սեփականատիրոջ հաշվին:

Հաշվեքննության արդյունքում տրամադրվել է **«ոչ լիարժեք եզրահանգում»** կարծիք:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-
ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ առողջապահության նախարարություն (այսուհետ՝ ԱՆ): Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների մատուցումն է:

Հաշվեքննությամբ արվել են համակարգին միտված 2, արդյունքին միտված 3 և խնդիրներին միտված 2 առաջարկություններ:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնական փաստերը.

- Գործող իրավակարգավորումները բավարար հստակ կարգավորումներ չեն սահմանում ծառայությունից օգտվողների շրջանակը հստակեցնելու և իրական կարիքի ձևավորման չափը գնահատելու համար: Մասնավորապես, **միջոցառման շահառուների ընդհանուր թվի մեջ ներառված է եղել 190206 քաղաքացի, որոնք, ըստ Հաշվեքննիչ պալատին ներկայացված տեղեկատվության, հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում չեն գտնվել ՀՀ տարածքում:** Ավելին, ևս 105365 քաղաքացի հաշվառված է այլ երկրների հյուպատոսություններում՝ որպես ՀՀ-ից դուրս մշտական բնակչության մեկնածուներ, սակայն նրանք ևս ներառվել են այդ ցանկում: Արդյունքում, **արձանագրվել է, որ գործող իրավակարգավորումներում առկա չէ միջոցառման շրջանակներում մատուցվող ծառայությունների կարիքի (պահանջարկի) գնահատման որևէ մեխանիզմ**, ինչի հետևանքով ֆինանսավորման համար հիմք է հանդիսացել միայն հաշվառված բնակչության թիվը, որը փաստացի կարիքի գնահատման մասին ձևավորում է ոչ ճշգրիտ պատկերացում:

- Պատշաճ ձևով չի հիմնավորվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների ձևավորման և հաշվարկման որևէ մեթոդաբանության առկայությունը կամ կիրառումը: Արդյունքում, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ չնայած գների հաշվարկման հանձնաժողովի բացակայությանը (այդ հանձնաժողովի առկայությունը օրենսդրության պահանջ է), այնուհանդերձ առողջապահության նախարարի հրամանով սահմանվել և կիրառվել են ծառայությունների մատուցման գներ, հիմքում չունենալով որևէ մեթոդաբանություն և դրա հիման վրա կատարված

հաշվարկներ:

- Հաշվեքննությանն անհրաժեշտ տեղեկատվությունը ԱՆ կողմից տրամադրվել է ոչ ամբողջական, ուշացումներով (իսկ որոշ դեպքերում չի տրամադրվել), ինչը էականորեն սահմանափակել է հաշվեքննությամբ սահմանված նպատակներին հասնելու հնարավորությունները: Այդ հանգամանքը էապես սահմանափակել է հաշվեքննության շրջանակը և հնարավորություն չի ընձեռել ձեռք բերելու բավարար և անհրաժեշտ ապացույցներ գործընթացի նպատակային և ծախսային արդյունավետ, ինչպես նաև տնտեսող լինելու վերաբերյալ:

- Համաձայն պետական բյուջեի 2019 և 2020 թվականների հաշվետվությունների՝ միջոցառման «Բնակչության առողջության առաջնային պահպանման գծով կազմակերպություններում գրանցված բնակչության թիվ» ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշի փաստացի մեծությունը գերազանցում է դրա պլանային մեծությանը՝ համապատասխանաբար 50667-ով և 65131-ով:

Վերը թվարկված պատճառներով հաշվեքննությամբ հնարավոր չի եղել գնահատել կատարողականի հաշվեքննության երեք սկզբունքներից և ոչ մեկը: Մասնավորապես.

Նպատակային արդյունավետությունը հնարավոր չի եղել գնահատել, քանի որ չի բացահայտվել միջոցառումն իրականացնելու համար ծախսված շուրջ 26.6 մլրդ դրամ բյուջետային միջոցների և ձևակերպված ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշի միջև կապը:

Ծախսային արդյունավետությունը հնարավոր չի եղել գնահատել, քանի որ, չնայած գործող օրենսդրությամբ սահմանված պահանջների առկայությանը, հաշվեքննությունը ներառող ժամանակահատվածում ԱՆ-ում չեն ներդրվել և չեն կիրառվել միջոցառման շրջանակում կանխատեսվող ծառայությունների քանակների և դրանց գների հաշվարկման կիրառելի մեթոդաբանություններ:

Տնտեսման սկզբունքի պահպանման վերաբերյալ եզրահանգումներ **հնարավոր չի եղել կատարել**, քանի որ բացակայում են ինչպես նպատակի սահմանման վերաբերյալ հստակ առարկայական չափորոշիչները, այնպես էլ այդ նպատակին հասնելու համար ծախսված ռեսուրսների՝ ծառայությունների գների վերաբերյալ հաշվարկային հիմնավորումները: Ավելին, արդյունավետ հսկողական համակարգի բացակայությունը թույլ չի տվել հաշվեքննողներին հավաստիանալ նպատակի սահմանման և իրագործման, ինչպես նաև բյուջետային ծախսերի արդյունավետ և տնտեսող ձևով իրականացման հարցերում:

**ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ
ԱՆԱԿԱՆՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ առողջապահության նախարարություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև
2020թ. դեկտեմբերի 31-ը:*

Հաշվեքննության առարկան սոցիալապես անապահով և առանձին խմբերի
անձանց բժշկական օգնության իրականացումն է:

Հաշվեքննությամբ արվել են համակարգին միտված 2 և խնդիրներին միտված
1 առաջարկություն:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնական
փաստերը.

- Դեպքերի անհատական վարման (case management) ընթացակարգում
ներգրավված 300-ից ավելի նեղ մասնագիտացված հիվանդությունների
գերակշիռ մասի համար բացակայել են լիազոր մարմնի կողմից
հաստատված կլինիկական ուղեցույցները, իսկ աշխատակազմում նեղ
մասնագիտական որակավորում ունեցող անհրաժեշտ թվով մասնագետներ
չեն եղել: Մասնավորապես, առողջապահության նախարարի հրամաններով
հաստատված ուղեցույցների թիվը չի անցնում 1000-ից, մինչդեռ,
Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից
հաշվառված հիվանդությունների թիվը գերազանցում է 14000-ը:
**Արդյունքում, կլինիկական ուղեցույցների գերակշիռ մասի, ինչպես նաև
բավարար թվով նեղ մասնագիտական որակավորում ունեցող
բժիշկների բացակայության պարագայում, ԱՆ-ն պարզապես
իրականացրել է դեպքերի անհատական վարման, գնահատման և
հաշվետվությունների ընդունման ու դրանց դիմաց վճարման
աշխատանքներ:**
- Տարեկան պայմանագրային 500 մլն դրամ և ավելի ծավալ ունեցող ԲԿ-
ներում ԱՆ-ն համաձայն առողջապահության նախարարի հրամանով
հաստատված պայմանագրի օրինակելի ձևի պահանջի՝ կարող էր ունենալ
ներկայացուցիչներ, **սակայն հաշվեքննությունը ներառող
ժամանակահատվածում նախարարությունը չի իրացրել իրեն
վերապահված այդ լիազորությունը և չի նշանակել ներկայացուցիչներ:**
Ավելին, չկա նաև հստակ իրավական սահմանում ներկայացուցչի

կարգավիճակի, գործառույթների, պարտավորությունների և հաշվետվողականության շրջանակի վերաբերյալ: Պայմանագրային կողմ հանդիսացող կազմակերպություններում ԱՆ կողմից 2019թ. իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով արձանագրվել են որոշակի շեղումներ: 2020թ. նմանատիպ ուսումնասիրություններ չեն իրականացվել: **Արդյունքում, հաշվեքննությունը ներառող ժամանակաշրջանում նախարարությունում լիարժեք չի գործել ներքին հսկողական համակարգը:**

- Հայցված տեղեկատվությունը ԱՆ կողմից տրամադրվել է **ոչ ամբողջական, ուշացումներով (որոշ դեպքերում ընդհանրապես չի տրամադրվել):** Որոշ դեպքերում պահանջված տեղեկատվությունը չի տրամադրվել նաև այն տիրապետող և տնօրինող այլ համապատասխան կազմակերպության կողմից, ինչն էլ էականորեն սահմանափակել է հաշվեքննության շրջանակը (մասնավորապես, անհրաժեշտ տեղեկատվության չտրամադրումը կամ մասնակի տրամադրումը հանգեցրել է կատարողականի հաշվեքննության համար սահմանված հարցերի ողջ շրջանակի գնահատման անհնարինությունը):

Տարեկան հաղորդման մեջ նշվում է, որ **հաշվեքննողները վերոհիշյալ պատճառներով հնարավորություն չեն ունեցել նախատեսված ծավալով իրականացնել ծրագրի նպատակային, ծախսային արդյունավետության և տնտեսական սկզբունքի** պահպանման ամբողջական գնահատումը, իսկ ձեռք բերված առանձին ապացույցները բավարար հիմք չեն ձևավորել եզրակացնելու, որ միջոցառման ծախսերը իրականացվել են **նպատակային և ծախսային արդյունավետության ու տնտեսական սկզբունքների** պահպանմամբ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

Հաշվեքննության առարկան ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում անտառօգտագործման գործընթացն է:

Հաշվեքննության հիմնական նպատակն է եղել գնահատել անտառօգտագործման գործընթացի շրջանակներում պետական սեփականության (այդ թվում՝ պետական բյուջեից հատկացված) միջոցների նպատակային և ծախսային արդյունավետությունը, ինչպես նաև տնտեսման սկզբունքների պահպանումը:

Հաշվեքննության շրջանակներում իրականացվել է ստուգում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ «Հայանտառ») անտառտնտեսությունների 5 (Արագածոտնի, Վանաձորի, Ստեփանավանի, Թումանյանի և Նոյեմբերյանի) մասնաճյուղերում, որոնց ընդհանուր պետական անտառային հողերը կազմում են 121.0 հազ. հա («Հայանտառի» պետական անտառային հողերի ընդհանուր տարածքի շուրջ 35.3%-ը):

Հաշվեքննությամբ արվել են համակարգին միտված 3, արդյունքին միտված 2 և խնդիրներին միտված 3 առաջարկություններ:

Նպատակային արդյունավետությունը տարբեր պատճառներով հնարավոր չի եղել գնահատել: Նշված պատճառներից առավել էականները հետևյալներն են.

- պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ ՊԼՄ) համակարգում օրենսգրքով սահմանված Անտառային պետական ծառայություն չի ստեղծվել,

- բնափայտի մթերումն իրականացվել և հատատեղերը որոշվել են անտառաշինական նախագծերի բացակայության պայմաններում՝ առանց ՊԼՄ-ի կողմից ստեղծված մասնագիտական հանձնաժողովների ուսումնասիրությունների և եզրակացությունների, իսկ հատատեղերի շահագործման ավարտից հետո տեղազննման և մաքրման աշխատանքներ չեն իրականացվել,

- «Հայանտառը» հաշվետու ժամանակահատվածում չի իրականացրել՝ անտառաշինական նախագծերի կազմման ոլորտում իրեն վերապահված, անտառների կենսաբանական բազմազանության պահպանման գործառույթները, չի մասնակցել անտառային հողերի և անտառների, բուսական և կենդանական աշխարհի հաշվառման աշխատանքներին, չի նախապատրաստել կադաստրի վարման անհրաժեշտ նյութերը, լիազորված պետական մարմնին չի ներկայացրել անտառների վիճակի և վերարտադրության վրա ազդող օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, շինարարության ու գործարկման պայմանների վերաբերյալ առաջարկություններ, չի ապահովել անտառահատման աշխատանքների ավարտից հետո հատատեղերի տեղազննումն ու աշխատանքների ընդունումը:

- ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի և «Հայանտառի» կողմից հնգամյա պարբերությամբ չեն իրականացվել անտառների և անտառային հողերի պետական հաշվառման և անտառային պետական կադաստրի վարման (թարմացման) աշխատանքներ:

- Նախարարությունում և «Հայանտառում» բացակայում է 2019-2020թթ. ընթացքում անտառի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման պայմանով անտառների և անտառային հողերի անհատույց կամ վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման վերաբերյալ

համապատասխան տեղեկատվությունը, ինչն անհնարին է դարձրել կատարված անտառապատման առկայության փաստի վերաբերյալ գնահատական տալը:

Ուշադրության են արժանի կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված *ծախսային արդյունավետության* և *տնտեսման* սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

- «Հայանտառի» կողմից կնքված և գործող 9 վարձակալության պայմանագրերում պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարների օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափը չպահպանելու արդյունքում անտառտնտեսության 5 մասնաճյուղերում ընդհանուր վարձակալված 36.7 հա անտառային հողատարածքներից 2019-2020թթ. ժամանակահատվածում, հաշվեքննողների հաշվարկներով, չեն գանձվել շուրջ 14.1 մլն դրամի վարձավճարներ:

- 2019-2020թթ. «Հայանտառի» որոշ մասնաճյուղերում նախկինում հիմնադրված տնկարանների խնամքի աշխատանքները կատարվել են թերի, ինչի արդյունքում չի ստացվել մշակված հատվածից ակնկալվող արդյունքը: **Փաստացի օգտագործվել են ռեսուրսներ, սակայն չի ստացվել սպասվելիք անտառվերականգնումը:**

Տնտեսման սկզբունքի չպահպանում

- 2019-2020թթ. ընթացքում փաստացի մատուցվել են ծառայություններ, որոնց գործընթացները պետք է կատարվեին գնումների վերաբերյալ իրավական նորմատիվ ակտերով սահմանված կարգով, մինչդեռ, փաստացի կնքվել են ժամկետային աշխատանքային պայմանագրեր ֆիզիկական անձանց հետ, իսկ վերջիններին աշխատանքից ազատելիս՝ կատարվել է վերջնահաշվարկ:

- «Հայանտառի» 2019-2020թթ. ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ու պլանավորման միջև առկա է էական տարբերություն, դրանք չեն կատարվել գնումների ոլորտում ներդրված հսկողական մեխանիզմների շրջանակներում: **Մրցակցության բացակայության պայմաններում ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների ծախսերը չեն հիմնավորվել որպես նվազագույն:**

- «Գնանշման հարցում» ընթացակարգով կատարված մի շարք գնումների ընթացքում «Procurement.am» տեղեկագրում **հրապարակման ենթակա նյութերը կա՛մ չեն հրապարակվել, կա՛մ հրապարակվել են սահմանված ժամկետի ուշացումով՝ որոշ դեպքերում խախտելով անգործության ժամկետը:**

• Բացակայում են ՊՈԱԿ-ի «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգի համաձայն կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ գնումների ոլորտի օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային փաստաթղթերը:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ **չեն պահպանվել տնտեսական և ծախսային արդյունավետության սկզբունքները:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ (ԹՎԱՅՆԱՑՄԱՆ) ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության (այսուհետ՝ ԲՏԱ) նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2021թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. նոյեմբերի 30-ը:

Հաշվեքննության առարկան ՀՀ թվային փոխակերպման (թվայնացման) գործընթացն է: Հաշվեքննության նպատակն է եղել՝ պարզել թվայնացման գործող ռազմավարական-ինստիտուցիոնալ կառուցակարգերի արդյունավետությունը ՀՀ թվային փոխակերպման ապահովման հարցում:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- **Ռազմավարության կատարողականի մասով.**

Թվայնացման ռազմավարությամբ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում նախատեսվել է իրականացնել 10 միջոցառում, **մինչդեռ, դրանցից որևէ մեկը սահմանված ժամկետներում լիարժեք չի կատարվել:**

- **Բյուջետավորման մասով.**

- Պետության՝ թվային փոխակերպման ռազմավարական նպատակին հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների տրամաբանական խմբավորում հանդիսացող բյուջետային ծրագիր **առկա չէ:**

- Բացի ԲՏԱ նախարարությունից, թվային փոխակերպմանն առնչվող որոշ բյուջետային միջոցառումների պատասխանատու են հանդիսանում նաև այլ գերատեսչություններ:

- **Կիբեռանվտանգության ապահովման մասով.**

- Չեն իրականացվել կիբեռանվտանգության վարժանքներ, առկա չեն նաև կիբեռպատահարների պարտադիր ազդարարման պահանջներ կամ իրական ժամանակում կիբեռպատահարների գրանցման դեպքում դրանց մասին տեղեկատվության ինքնաշխատ ստացման ու մշտադիտարկման տեխնիկական կարողություններ:

- o ՀՀ-ում **առկա չէ** կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների սահմանում, բացակայում են դրանց բացահայտման չափանիշները, չկա ազգային ռեգիստր: Այս պայմաններում հնարավոր չէ կիրառել կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանության ինստիտուցիոնալ կառուցակարգեր:
- o **Չի իրականացվել** Կիբեռանվտանգության ազգային կենտրոնի ստեղծման ռազմավարական միջոցառումը, որը պետք է հանդիսանար պետական համակարգերի կիբեռանվտանգության գրավականը, ապահովեր անձնական տվյալների պաշտպանությունը և խթաներ կիբեռգրագիտության զարգացումը:

• **Թվայնացման ռազմավարության համապարփակության մասով.**

ՀՀ թվայնացման ռազմավարությունում նշված չեն տնտեսության և հանրային կառավարման առանձին ճյուղերում թվային փոխակերպումների իրականացման միջոցառումները, ժամանակացույցն ու կատարողները: Փոխարենը՝ առանձին գերատեսչությունների կողմից մշակվել և իրականացվում են թվայնացմանն ուղղված ոլորտային ռազմավարական միջոցառումներ և նախաձեռնություններ:

Հաշվեքննությամբ արվել են համակարգին միտված 12, արդյունքին միտված 9 և խնդիրներին միտված 3 առաջարկություններ:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ **չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:**

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԴՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օրյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը:

Հաշվեքննության առարկան Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացումն է:

Ուշադրության են արժանի կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Ծախսային արդյունավետության սկզբունքի չափականում

- Ծրագրի իրականացման ընթացքում առաջացել է 823.3 մլն դրամ պարտավորավճար և վարկի մասհանման վերջնաժամկետի երկարաձգման համար 173.7 մլն դրամ հատուցման վճար:
- Խորհրդատվական պայմանագրի փոփոխություններով լրացուցիչ հատուցումներ են նախատեսվել համապատասխանաբար՝ 400 հազ. եվրո և 526.3 հազ. եվրո չափով, իսկ ծրագիրը թանկացել է 43.2%-ով՝ 101 մլն եվրոյով:

Նպատակային արդյունավետության սկզբունքի չափականում

• **Գնման գործընթացի մասով.**

Ծրագրի նպատակին հասնելու հարցում անորոշությունը ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից ռիսկեր է ստեղծում: Ծրագրի մեկնարկը (գլխավոր կապալառուների մրցույթի հայտարարում, նախաորակավորված հայտատուներին մրցույթային փաթեթների տրամադրում և այլն) չի տրվել:

• **Ծրագրի իրականացման վրա «Բարձրավույտ Էլեկտրագանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԲԷՑ) ֆինանսական վիճակի ազդեցության մասով.**

ԲԷՑ-ը չունի ծրագրի՝ որպես ներդրման, արդյունավետության գնահատման որևէ ընթացակարգ: Ըստ էության, ծրագրի մասով ծախսերի առանձնացված հաշվառում չվարելը և ներդրումներից ակնկալվող եկամուտների գնահատումներ չիրականացնելը ապագա հատուցումների մասով անորոշություն է առաջացնում, որը հնարավորություն չի տալիս գնահատելու ծրագրի չափելի ազդեցությունը ԲԷՑ-ի ֆինանսական վիճակի վրա:

• **ՏԿԵՆ-ի և ԲԷՑ-ի միջև հաղորդակցության մասով.**

- o ՏԿԵՆ-ում գործող կառավարման խորհուրդը, ամիսը մեկ անգամ նիստեր չգումարելով, ընթացիկ իրավիճակի մասին բավարար տեղեկատվություն չստանալով, չի պահանջել, չի ստացել, չի քննարկել և չի վերհանել առաջընթացի բացակայության պատճառները:
- o Չի իրականացվել ծրագրի մոնիտորինգ:

Հաշվեքննությամբ արվել են համակարգին միտված 3 և արդյունքին միտված 4 առաջարկություններ:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ ***չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները:***

**ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օրյեկտը՝ Ծաղկաձորի համայնքապետարան:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2021թ. հունվարի 1-ից մինչև
2021թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան Ծաղկաձորի համայնքապետարանի 2021
թվականի ֆինանսատնտեսական գործունեությունն է:

Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում նշված է, որ ֆինանսական
հաշվեքննության տեսանկյունից՝ էական *անհամապատասխանություններ* և
խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել: Իսկ համապատասխանության
հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ *անհամապատասխանությունները*.

- Մի շարք պայմանագրեր կնքվել են՝ **չպահպանելով** «Գնումների մասին»
ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի»
պահանջները: Մասնավորապես, օրինակ՝ կնքված որոշ պայմանագրերում
որպես պարտադիր պահանջ երաշխիքային ժամկետ չի նախատեսվել, որոշ
պայմանագրերով ի սկզբանե սահմանված ժամկետները երկարաձգվել են
սահմանված պահանջներին ոչ համապատասխան, երկարաձգված
ժամկետների մասով գնման փաթեթներում առկա չեն պայմանագրի կողմի՝
ժամկետների երկարաձգման գործընթացի սկզբնավորման հիմք
հանդիսացող դիմումները:
- Որոշ դեպքերում **չի պահպանվել** «Ինքնական կառույցների
օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված պահանջը:
Մասնավորապես, համայնքի ղեկավարի կողմից մինչև 200 ք.մ.
հասարակական նշանակության կառույցների համար 30-օրյա ժամկետում չի
ընդունվել օրինականացման կամ մերժման մասին որոշում:
- Համայնքի ավագանու կողմից ընդունված մի շարք որոշումներում նշված
չեն համայնքային սեփականություն համարվող հողամասի օտարման
ժամկետները և նպատակը:

Մի շարք դեպքերում օտարման իրավունքի պետական գրանցում ստանալուց
հետո հողամասերի մակերեսներն ու արժեքները չեն ներառվել գույքահարկի
պարտավորությունների տեղեկատվական ավտոմատացված համակարգում, որի
արդյունքում չի հաշվարկվել համապատասխան գույքահարկը: Հաշվեքննությամբ
արվել են խնդիրներին միտված 2 առաջարկություններ:

Հաշվեքննության արդյունքում տրվել է **«դրական եզրահանգում»** կարծիք:

ՀՊ-ի համագործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության հետ¹

Հ/Հ	Թեմա	Հաշվե- քննությունն ընդգրկող ժամանա- կաշրջանը	Ծանոթություն
I. ՀՊ-ն տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ հաշվեքննության արդյունքներով			
1	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	01.01.2022- 30.06.2022թթ.	16.11.2022թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում:
2	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	01.01.2018- 31.12.2020թթ.	19.07.2022թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, որը 05.08.2022թ. միացվել է ՀՀ ՔԿ ՀԿԳ-ում իրականացվող վարույթին: Գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 76.0 մլն դրամ:
3	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	01.01.2018- 31.12.2020թթ.	15.07.2022թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 268.0 մլն դրամ:
4	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	01.01.2018- 31.12.2020թթ.	03.08.2022թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 215.0 մլն դրամ:
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն («Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ)	01.01.2020- 31.12.2020թթ.	23.05.2022թ. հարուցվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում:
II. ՀՊ-ն տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազության պահանջով			
1	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն («Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ)	01.01.2017- 30.09.2018թթ.	26.11.2022թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 135.7 մլն դրամ:

¹ Հավելվածում ներառված չէ պետական գաղտնիք պարունակող հաշվեքննությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

2	ՀՀ առողջապահության նախարարություն (Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում)	01.01.2020-31.12.2020թթ.	23.05.2022թ. նախաձեռնվել է քրեական վարույթ: Քրեական վարույթից անջատվել են 11 քրեական վարույթներ, որոնք գտնվում են նախաքննության փուլում: Քրեական հետապնդում է իրականացվել 11 անձի նկատմամբ: Պետությանը պատճառված վնասի չափը նախնական հաշվարկով կազմում է 109.0 մլն դրամ:
3	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում)	01.01.2020-31.12.2020թթ.	27.05.2022թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 23.0 մլն դրամ:
4	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության ծառայություն»	01.01.2017-31.12.2018թթ.	13.09.2022թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 8.2 մլն դրամ:
5	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	01.01.2021-30.12.2021թթ.	Ուսումնասիրության փուլում է:
6	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրեր)	01.01.2017-31.12.2019թթ.	Ուսումնասիրության փուլում է:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**